# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
# ՈՐՈՇՈՒՄ

**N 369- Ա** **23 դեկտեմբերի 2015 թ.**

## ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով <<Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի առաջին մասով, 1.12-րդ կետի <<բ>> ենթակետով

***որոշում եմ՝***

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման <<Այլ նպաստներ բյուջեից>> հոդվածով նախատեսված ծախսերից սոցիալական աջակցության նպատակով հատկացնել 200000 /երկու հարյուր հազար/ դրամ միանվագ օգնություն ՀՀ Գեղարքունիքի մարզի Դդմաշեն համայնքի ավտովթարից զոհված ամուսիններ Վահրամ Կառլենի Սահակյանի և Լարիսա Զախիտովնա Տունենովայի ընտանիքին, համաձայն հավելվածի:
2. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի գլխավոր ֆինանսիստին՝ սահմանված կարգով կատարել համապատասխան փաստաթղթային ձևակերպումներ, գումարը վճարել Վահրամ Սահակյանի հորեղբոր որդի Գոռիկ Էդվարդի Սահակյանի միջոցով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հավելված
ՀՀ Գեղարքունիքի մարզպետի
2015 թ. դեկտեմբերի 23 -ի
N 369-Ա որոշման

# ՑՈՒՑԱԿ

## ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂԻ

| հ/հ | ազգանուն, անուն | հասցե | հատկացված գումարի չափը դրամով | ծանոթություն |
|---|---|---|---|---|
| 1. | Սահակյան Վահրամ Կառլենի և Տունենովա Լարիսա Զախիտովնա | գ. Դդմաշեն | 200000/երկու հարյուր հազար/ | Ավտովթարից զոհված ամուսիններ |
| | Ընդամենը | | 200000/երկու հարյուր հազար/ | |

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ԽԼՂԱԹՅԱՆ

Կատարող՝ՖՍՏՋ Վարչություն
Ա.Բաղեյան